Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ 1

Ի պատասխան № **TIIG-17 «Չարենցավանի համայնքային ենթակայության տարածքներում արևային ֆոտովոլտային կայանների ձեռքբերում և տեղակայում»** ապրանքների գնման մրցույթի վերաբերյալ 2021թ. ապրիլի 30-ին ժամը 11:07:05-ին Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց 1՝ «Համաձայն մրցույթի հրավերի 2.1 որակավորմանն ուղղված պահանջներ հոդվածի i ենթակետի՝ ֆինանսական հնարավորություններ/ հայտատուի վաճառքի միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք տարիների ընթացքում /2018-2020/ թթ. պետք է լինի նվազագույնը առաջարկած գնի չափով: Մեր ընկերությունը սկսել է գործունեություն ծավալել 2019 թ. մարտ ամսից: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք պարզաբանել, թե ինչպես է գնահատվելու այդ պարագայում մեր վաճառքի միջին տարեկան շրջանառությունը:»

Պատասխան՝

Հարցում նշված որակավորման չափանիշը հաշվարկվում է ինչպես նշված է պահանջում երեք տարիների շրջանառությունը միջին թվաբանականի հաշվարկի միջոցով և տարիներից որևէ մեկում շրջանառության բացակայության դեպքում այն հաշվարկվում է որպես զրոյական:

Հարց 2՝ «7-րդ բաժնի/ պահանջների ցանկի/ 2-րդ կետի աղյուսակում առաքման վերջնաժամկետ նշված է 150 օր: Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք ապրանքների տեղադրման աշխատանքները ևս ներառված է այդ ժամանակահատվածում, թե միայն ապրանքների մատակարարումն է ենթադրվում:»

Պատասխան՝

Հարցում նշված աղյուսակում առաքման ամսաթիվը ենթադրում է Պատվիրատուի կողմից ապրանքի տեղադրման և շահագործման հանձնման ակնկալվող վերջնական ամսաթիվը:

Հարց 3՝ «Խնդրում ենք նաև պարզաբանել, արդյոք փաստաթղթերը կարող են կնքված, ստորագրված կցվեն, թե՞ պարտադիր է էլեկտրոնային ստորագրությամբ:»

Պատասխան՝

Հաշվի առնելով, որ մրցույթը անց է կացվում Armeps համակարգի միջոցով հայտով ներկայացվող փաստաթղթերը կարող են ստորագրվեն և կնքվեն թղթային տարբերակով և սկանավորի և/կամ կնքվեն էլեկտրոնային ստորագրությամբ:

ՀՏԶՀ գնումների բաժին
03 մայիսի 2021թ.